

0-45

ՀՀ ՔԱՆԱԿԱՆ ԱՐԽԵՈԼՈԳԻԱ ԵՎ ԷՏՆՈԳՐԱԲԻՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՐԱՆՁԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՄԵԼԵՈՆԻ

«ԲԱՆԱԼԻ ԵՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԵՐԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Թ 00.05 «Կրոնի փիրլիստփայություն, կրոնի տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 1 1

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ОГАНДЖАНЯН АННА МЕЛКОНОВНА

РУКОПИСЬ “КЛЮЧ ИСТИНЫ”
И ЕГО ИСТОРИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности
09. 00.05 “Философия религии, теория и история религии”

Е Р Е В Ա Ն - 2 0 1 1

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

պատմ. գիտ. դոկտոր,
պրոֆ. Ս.-Է. Ս. Շիրինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ., ԶԶ ԳԱԱ
ակադեմիկոս
Յր. Մ. Բարթիկյան
պ. գ. թ. Ա. Ս. Սահակյան

Առաջատար կազմակերպություն՝


ԶԶ ԳԱԱ Պատմության
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հունիսի 28-ին, ժամը 14.00-ին ԶԶ ԳԱԱ Զնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի 007 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԶԶ ԳԱԱ Զնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու

 Յ. Ա. Մելկոնյան

Тема диссертации утверждена в Ереванском Государственном Университете

Научный руководитель

доктор исторических наук,
профессор, М.-Э. С. Ширинян

Официальные оппоненты

доктор исторических наук,
профессор, академик НАН РА
Г. М. Бартикян
кандидат исторических наук,
А. С. Саакян

Ведущая организация

Институт Истории НАН РА

Защита состоится 28 июня 2011 г. в 14.00 часов, на заседании специализированного совета 007 в Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 27 мая 2011 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат исторических наук

 Յ. Ա. Մելկոնյան

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՅԱԼՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ուշ միջնադարի և նոր շրջանի սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, հատկապես, եթե դրանք աղանդավորական բովանդակություն ունեն, լույս են սփռում Զայաստանի արդի կրոնական իրավիճակի և մի շարք կրոնական ուղղությունների ծագման և զարգացման պատմության վրա: Այսպիսի աղբյուրների թվին է պատկանում «Բանալի ճշմարտութեան» երկը, որը դեռևս 19-րդ դ. կեսերից մշտապես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում (Ֆ. Կոնիբիր, Բ. Սարգիսյան, Ն. Գարսոյան, Լ. Արփի, Ա. Կեօրկիզյան և այլք):

Համաշխարհային գիտական շրջանակներում ինչպես նախկինում, այնպես էլ այսօր չի նվազում հետաքրքրությունը պավլիկյան և թոնդրակյան աղանդների նկատմամբ: Գրեթե երկու դար շարունակ արտերկրի հայագիտության մեջ պավլիկյան և թոնդրակյան աղանդները եվրոպական բարեկարգության ու հայ բողոքականության հետ կամրջելու փորձեր են արվում: Գիտնականները ձգտում են պավլիկյան գաղափարախոսության մեջ հայտնաբերել նոր սկզբունքներ, որոնք հնարավոր կդարձնեին այդ շարժումները մերօրյա բողոքական ուղղություններին աղետելը: Նրանց բոլոր փորձերը խարսխվում են «Բանալի ճշմարտութեան» գրչագրի ուսումնասիրության վրա, որը համարում են պավլիկյան-թոնդրակյան ձեռնարկ: Մյուս կողմից, «Բանալու» որդեգրական (ադոպցիոնստական) ուսմունքի վրա հիմնվելով, պավլիկյան և թոնդրակյան աղանդների արմատները տեսնում են 2-րդ դ. որդեգրականության մեջ:

Այս գաղափարների ազդեցության ներքո, այսօր մեզանում դեռ կիրառական Զայ ժողովրդի պատմության որոշ դասագրքերում «Բանալի ճշմարտութեան» երկը ներկայացվում է որպես թոնդրակյան դավանաբանական ձեռնարկ, որից մեջբերումներ են արվում (Տե՛ս, ժամկոչյան Զ.Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ա.Ս., Պողոսյան Ս.Պ., Զայ ժողովրդի պատմություն, Եր., 1975, էջ 479): Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ հիմնվելով «Բանալի ճշմարտութեան» գրչագրի վերաբերյալ վերոնշյալ տեսակետի վրա, 19-րդ դարից մինչ օրս հայ ավետարանական մի շարք հեղինակներ Զայաստանում բողոքականության տարածումը առնչում են պավլիկյան և թոնդրակյան աղանդներին՝ այդպիսով «վաղեմացնելով» Զայ ավետարանական եկեղեցու ձևավորումը:

Ատենախոսության մեջ փորձ է արվում գիտականորեն վերլուծելու նման զուգահեռների փաստացի պատճառաբանվածությունը և օբյեկտիվությունը: Կարծում ենք՝ արդիական է այս հարցերի վերաբերյալ նոր, դեռևս չլուսաբանված նյութով հանդես գալը, օբյեկտիվ կերպով խնդիրը քննել և ներկայացնելը, ինչը հնարավորություն է ընձեռում նոր փաստերի լույսի ներքո «Բանալի ճշմարտութեան» ուսմունքի քննությունը դուրս բերել վաղուց արդեն իրեն սպառած «պավլիկյան-թոնդրակյան վարկածի» համատեքստից և դիտարկել որպես ինքնուրույն ձևավորված, 18-19-րդ դդ. դավանական բարձիթողի և անտերունչ վիճակի դրոշմը կրող և իր ժամանակի կրոնական ազդեցությունների սինթեզը հանդիսացող մի գործ:

Ատենախոսության նպատակը: Սույն աշխատանքի հիմնական նպատակն է.

ա) հաստատել, որ «Բանալի ճշմարտութեան» գրչագիրը 10-րդ դարում տեսողված պավլիկյան կամ թոնդրակյան դավանաբանական ձեռնարկ չէ, այլ 18-

րդ դարի վերջին շարադրված մի գործ, յուրահատուկ մի համաձուլվածք՝ հագեցած դավանաբանական բազմաշերտ տարրերով (հակալատինական, բողոքական, առաքելական և այլն):

բ) լուծել «Բանալի ճշմարտութեան» գրչագրի հեղինակի և գրության ժամանակի, ինչպես նաև բնագրի և ընդօրինակությունների խնդիրը,

գ) քննել առաջադրված որդեգրական վարկածը՝ մատնանշելով դրա խոցելի կողմերը,

դ) համեմատել պավլիկյան, թոնդրակյան և «Բանալի ճշմարտութեան» ուսմունքները, վերլուծել սկզբնաղբյուրները և ցույց տալ դրանց տարբերությունները,

ե) քննել պավլիկյան-թոնդրակեցիների և Հայ ավետարանական եկեղեցու ժառանգորդական կապերի վարկածը՝ բացահայտելով վերջինիս կեղծ-պատմական հիմքերը:

Ատենախոսության մեթոդն է պատմա-բանասիրական, համեմատական և քննական վերլուծությունը: Աշխատության մեջ քննվում և արժևորվում են յուրաքանչյուր հարցի վերաբերյալ եղած սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները, կատարվում են տոմարական հաշվարկներ, քննական-համեմատական վերլուծությունների արդյունքում առաջարկվում են նոր լուծումներ: Կազմվել է նաև «Բանալու» բնագրի և հրատարակված տեքստի համեմատական աղյուսակը կարևոր իմաստային, բառային և ուղղագրական տարբերությունները ցույց տալու համար:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական նշանակությունը: ««Բանալի ճշմարտութեան» երկը և նրա պատմագիտական արժեքը» աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրելու տվյալ երկը տարածված տեսակետներից և վարկածներից դուրս՝ որպես ինքնուրույն մի գործ: Աշխատության գիտական նորույթն այն է, որ.

ա) առաջին անգամ համակողմանիորեն քննվում և լուսաբանվում է «Բանալու» գրության ժամանակի խնդիրը, որոշվում են գրության, ինչպես նաև ընդօրինակության ստույգ տարեթվերը,

բ) քննվում է հեղինակային պատկանելության խնդիրը, նախորդ ուսումնասիրությունների, նաև նոր աղբյուրների հենքի վրա վերջնականապես որոշվում է ձեռագրի հեղինակը,

գ) կատարվում է երկի ուսմունքի անկախ ուսումնասիրություն, վերհանվում և մանրամասնորեն վերլուծվում են ուսմունքային բոլոր շերտերը, պացուցվում է, որ «Բանալին» ոչ թե պավլիկյան-թոնդրակյան կամ զուտ բողոքական մի գործ է, ինչպես ընդունված էր կարծել նախկինում, այլ ինքնուրույն մի երկ, ամենատարբեր ուսմունքների յուրահատուկ համաձուլվածք,

դ) առաջին անգամ հրապարակ են հանվում արխիվային նոր փաստաթղթեր, որոնք օգնում են պարզելու «նոր թոնդրակեցիներ» անունն ստացած աղանդավորների գործունեությանն ու ճակատագրին վերաբերող նոր մանրամասներ,

ե) վերլուծվում են որոշ ուսումնասիրողների կողմից պավլիկյան համարվող մի քանի աղբյուրներ, ապացուցվում է, որ դրանք առնչություն չունեն պավլիկյան գաղափարախոսության հետ,

գ) փաստերով ապացուցվում է, որ թոնդրակյան աղանդը հայ բողոքականության նախակարապետը չի կարող լինել,

է) առաջին անգամ կատարվում է «Բանալու» բնագրի ձեռագիր և հրատարակված տեքստի համեմատություն, որով մատնանշվում են եղած բազմաթիվ իմաստային տարբերությունները:

Չետագոտական աշխատանքի առանձին դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում՝ «Միջնադարյան աղանդների պատմություն» դասընթացի շրջանակներում, ինչպես նաև կօգնեն թարմացնելու «Հայոց պատմության» որոշ դասագրքերում թոնդրակեցիների և «Բանալի ճշմարտութեան» ուսմունքների նույնությունը ընդգծող պարագրաֆները: Ատենախոսության գիտագործնական կարևոր նշանակությունը նաև այն է, որ վերջինիս դրույթների լույսի ներքո կարող են փոխվել պավլիկյան և թոնդրակյան ուսմունքների, ինչպես նաև հայ բողոքականության առաջացման վերաբերյալ արտերկրում տարածված վարկածները, որոնցով սնվել է գիտնականների մի քանի սերունդ:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Աշխատանքում օգտագործվել են հայկական և օտար սկզբնաղբյուրներ: Ատենախոսության համար առանցք են հանդիսացել «Բանալի ճշմարտութեան» ձեռագիրը և Ֆ. Կոնիքիի «The Key of truth» աշխատությունը: Օգտագործվել են նաև Կոնիքիից հետո «Բանալու» արժևորմանը ուշադրություն դարձրած Բ. Սարգիսյանի, Ն. Գաբրուսյանի, Ա. Կեօրկիզյանի, Վ. Ներսիսյանի և շատ ուրիշների ուսումնասիրությունները:

Արխիվելի աղանդավորների պատմությունը ներկայացնելու համար Ալ. Երիցյանի հոդվածի հետ միասին օգտագործվել են բուն սկզբնաղբյուրները՝ էջմիածնի Սիմոնի փաստաթղթերը, չիրապարակված արխիվային մի գործ, ինչպես նաև 1842-1856 թթ. մարդահամարների և չափաբերական մատյանների տեղեկությունները: Հարցին առնչվող հոդվածներից աշխատության մեջ ներառվել են Գ. Տեր-Սկրտչյանի երկու հոդվածները:

«Բանալի ճշմարտութեան» հեղինակային պատկանելության և գրության ժամանակի վերաբերյալ «Բանալու» ձեռագրից զատ սկզբնաղբյուրներից նախ առանձնացվել են Պողոս Մեհերյանի օրագիրը, Կոստանդնուպոլսի Զաքարիա պատրիարքի և Դուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակագրությունը՝ ներկայացված Վ. Գրիգորյանի հոդվածում: Առաջին անգամ ներկայացվել են ամերիկացի միսիոներների զեկույցները՝ տպված «Missionary Herald» պարբերականում և Ստ. Ութունյանի հուշագրությունները, որոնք օգտակար են որպես սկզբնաղբյուր: Քննվող հարցերի վերաբերյալ կարևոր աղբյուրներ են Սիմեոն Երևանցու «Պարտավճարը» և «Յիշատակարանը», ինչպես նաև Գեորգ Կոստանդնուպոլսեցի Մխլեյիմի երկերը, որոնք փաստում են անգլիացի և գերմանացի բողոքականների առկայությունն ու գործունեությունը 17-րդ դ. Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի տարածքներում:

Երկի բովանդակությունը շարադրելիս օգտագործվել են նաև ՍՍ թիվ 717 (ժողովածու, Հովհաննես Քոնեցու հակահայ գրվածքը) և թիվ 4333 («Հայելի ճշմարտութեան» լատինական գրվածքը) գրչագրերը: Համեմատական կարգով մեջբերվել են նաև Տերտուլիանոսի և Գրիգոր Նազիանզացու երկերը: Ձեռագրի

ուսմունքում առկա պարականոն պատմունքների լուսաբանման համար մեզ օգնել են ՄՄ թիվ 682 ձեռագիրը, Կիրակոս Գանձակեցու, Սամվել Անեցու երկերը: Օգտագործվել են նաև «Կնիք հաւատոյ» ժողովածուն, «Ձեռնադրութեան Մաշտոց»-ը, Առաքելական եկեղեցու «Պատարագամատույց»-ը՝ ձեռագրի ուսմունքի և առաքելական ծեսերի նմանությունները ընդգծելու միտումով: Ձեռագրի լեզուն և ոճը քննելիս օգտագործվել են Ֆ. Մակլերի և Ա. Մեյեի, ինչպես նաև Պ. Լեմերլի գրախոսականները:

Որդեգրականության պատմությունը նկարագրելիս օգտվել ենք այնպիսի սկզբնաղբյուրներից, ինչպիսիք են Եպիփան Կիպրացու «Պանարիոնը» և Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը»: Կոնիբիրի տեսության մեջ պավլիկյանների ունեցած դերը ցույց տալու համար օգտագործվել են Դովհան Օծնեցու «Ընդդէմ պաւլիկեանց» երկը, Կ. Տեր-Մկրտչյանի, Զր. Բարթիկյանի, Ե. Լիպշիցի, Կ. Յուզբաշյանի հոդվածները: Բոզոմիլների և պավլիկյանների ուսմունքների միջև եղած նմանությունները ընդգծելիս աղբյուր են ծառայել Դ. Անգելովի, Բ. Պրիմովի, Դ. Դրագոյլովիչի ուսումնասիրությունները, ինչպես նաև Է. Սելյանի երկու հոդվածները:

Պավլիկյան անվանման հարցերը քննելիս օգտվել ենք՝ Թեոդոր Թեոդորիդիսի տեղանունների բառարանից, Կ. Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությունից, Մ. Լուսի գրախոսականներից, Զր. Բարթիկյանի և Կ. Յուզբաշյանի հոդվածներից:

Կեղծ պավլիկյան աղբյուրների արժևորմանն անդրադառնալիս օգտագործվել են Ա. Գալանդիի, Ֆ. Կոմբեֆիի և Մինյի աշխատություններում պահպանված կեղծ-Սահակի "Λόγοι στυλιτευτικοί" (Բանք մեղադրականք) թղթերը, Ժերար Գարիտի հրատարակած "Narratio de rebus Armeniae"-ի քննական բնագիրը և նույնի հայերեն թարգմանությունը՝ արված Զր. Բարթիկյանի կողմից, Ի. Տրոիցկու, Լ. Միլքսեթ-Բեկի, Կ. Մելիքյանի աշխատությունները, որոնք առնչվում են կեղծ Սահակի թղթերին, ինչպես նաև նույն Լ. Մելիքսեթ-Բեկի, Բ. Սարգիսյանի, Ֆ. Վինկելմանի հոդվածները, Ն. Ակինյանի և Պ. Զամելյանի "Narratio"-ին վերաբերող գրախոսականները:

Կոնիբիրի կողմից մատնանշվող մյուս կեղծ պավլիկյան աղբյուրների արժևորման համար անդրադարձել ենք Ղազար Փարպեցու, Մատթեոս Ուռնայեցու, Վարդան Բարձրբերդեցու երկերին, Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթ»-ին, Դավիթ Անհաղթին վերագրվող երկու ճառերի՝ «Բարձրացուցեք» և «Յաղագս եկեղեցույ»: Օգտագործվել է նաև Դավիթ Անհաղթի ճառերի վերաբերյալ Պ. Անանյանի հոդվածը և Մ.-Է. Շիրինյանի հրատարակած Գրիգոր Աբասեսանի «Գիրք Պատճառաց»-ի «Բարձրացուցեք» ճառին վերաբերող հատվածը:

Սմբատ Ջարեհականցու անձի հետ կապված վարկածների քննության համար օգտվել ենք Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրութիւն»-ից, Թովմա Արծրունու, Դովհաննես Դրասխանյանի երկերից: Օգտագործել ենք Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմութիւն»-ը և Սեբեոսի պատմության հրատարակություններից երկուսը (հատկապես կարևորելով Ստ. Մալխասյանցի հրատարակությունը): Կարևոր սկզբնաղբյուրներ են եղել Սմբատ Վրկանա Մարգպանի մի քանի թղթերը՝ գրված ընդդէմ քաղկեդոնականների՝ «Ձեռնարկ զոր խնդրեաց Սմբատ Վրկան մարգպան», «Թուղթ Տեառն Սմբատայ՝ Վրկան Մարգպանի առ

Կիրիոն՝ Վրաց կաթողիկոս», «Պատասխանի Սմբատայ առ Մովսէս», Գրիգոր Նարեկացու՝ Կճավի վանահորն ուղղված նամակը, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ղ. Ալիշանի հրատարակած Մխիթար Ապարանցու վկայությունները:

Խութեցիների դավանական ինքնության հարցը քննելիս՝ օգտվել ենք Միաբանի հրատարակած «Գիրք Յերձուածոց» աղբյուրից: Այս հարցի քննության վերաբերյալ մեր եզրակացությունները հիմնավորելու համար հիանալի աղբյուր են ծառայել Սիմեոն Լեհացու ուղեգրությունները, Միսաս Բժշկյանց Տրապիզոնցու «Պատմութիւն»-ը, Զ. Տաշյանի ուսումնասիրությունը Սև ծովի ավազանի բնակիչների ազգագրության մասին, ինչպես նաև Դ. Թելլորի ուղեգրությունները և Զյուրշմանի ուսումնասիրությունը:

Պավլիկյան-թոնդրակյան և «Բանալու» ուսմունքների համեմատության համար օգտվել ենք Պետրոս Սիկիլիացու (Վանականի), Փոտի, Գևորգ Վանականի գրվածքներից, Պողոս Տարոնացու, Ներսես Շնորհալու երկերից, Գրիգոր Մագիստրոսի թղթերից և այլն:

Հայ ավետարանական եկեղեցու և պավլիկյան-թոնդրակեցիների ժառանգորդական կապերի վարկածի լուսաբանման համար աղբյուր են ծառայել Ն. Տաղավարյանի, Զ. Պողոսյանի, Լ. Արփիի, Ա. Կեօրկիզյանի, Ա. Ղազարյանի և Ռ. Լևոնյանի, Բ. Եղիայանի, Ջամիլյանի, Կ. Ատանալեանի, Վ. Թութիկյանի և այլոց աշխատությունները: Հայ ավետարանական հեղինակների կողմից ժառանգորդման հարցերի քննարկման համար օգտվել ենք Լ. Արփիի կարևոր մի հոդվածից, անդրադարձել ենք նաև միսիոներներ Զեների Մարտինի, Էլի Ամիթի և Զեների Օտտիս Դուայթի նոթերում պահպանված տեղեկություններին, որոնք ներկայացնում են Օսմանյան կայսրությունում և Պարսկաստանում տիրող կրոնական իրավիճակը:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի միստում: Աշխատանքում քննարկված նյութը և առաջադրված հարցերը ներկայացվել են հայաստանյան և արտասահմանյան միջազգային գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացություններից, ունի հավելվածներ:

Ատենախոսության բովանդակությունը: Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության արդիականությունը և գիտական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են օգտագործված աղբյուրները, վերհանվում են մեթոդաբանական սկզբունքներն ու գիտական նորույթը:

Առաջին՝ ««Բանալի ճշմարտութեան» երկը» գլուխը ստորաբաժանված է երեք ենթագլուխների: ««Նոր թոնդրակեցիները» 19-րդ դարում» առաջին ենթագլխում արխիվային փաստաթղթերի հիման վրա ներկայացվում է Շիրակի մարզի Երրորդ Արխիվի գյուղում 19-րդ դ. 30-ական թթ. հաստատված աղանդավորների պատմությունը, որոնց մոտ գտնվել էր «Բանալի ճշմարտութեան» երկի գրչագիրը: Ներկայացվում է արխիվելի աղանդավորների դավանանքը, ինչպես նաև սրանց դեմ հարուցած էջմիածնի Սուրբ Սիմոնի գործը: Մասնավորապես

շեշտվում է այն փաստը, որ Էջմիածնի Սինդոի գործում այս աղանդավորները բնորոշվում են «նոր թոնդրակեցիներ» անվանումով: Նշված անվանումը հետագայում Ալ. Երիցյանը դնում է շրջանառության մեջ և ցայսօր գիտական հրապարակումներում տվյալ աղանդավորները այդպես էլ կոչվում են «նոր թոնդրակեցիներ», ինչը չի համապատասխանում իրականությանը: Ներկայացվում են արխիվային փաստաթղթերից, չափաբերական մատյաններից քաղված նոր տվյալներ «նոր թոնդրակեցիներ»-ի վերաբերյալ, ինչպես նաև ցույց է տրվում սրանց և պրիզուն մոլոկանների, մկրտականների և կրկնամկրտականների ուսմունքային ընդհանրությունները:

«**«Բանալի ճշմարտութեան» գրչագրի ժամանակի և հեղինակի խնդիրը**» երկրորդ ենթագլուխն իր հերթին ունի երեք բաժիններ: Ա բաժնում՝ **«Տեղեկություններ գրչագրի ստեղծման հանգամանքների շուրջ»**, համեմատական վերլուծությամբ ներկայացված են հինգ սկզբնաղբյուրներ, որոնք տեղեկություններ են տալիս «Բանալի ճշմարտութեան» երկի գրության տարեթվի և հեղինակի վերաբերյալ: Դրանք են «Բանալու» հիշատակարականը, Էջմիածնի Սինդոի աղանդավորների հավատաքննության գործը, որտեղ հակասական տեղեկություններ կան աղանդավորներից վերցված ձեռագրի գրության ժամանակի վերաբերյալ, Բ. Սարգիսյանի մեջբերած Պողոս Մեհերյանի անտիպ ուղեգրությունների վկայությունները «Բանալի ճշմարտութեան» հեղինակի վերաբերյալ, Ջաքարիա պատրիարքի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակագրությունը՝ ներկայացված Վ. Գրիգորյանի հոդվածում և ամերիկյան «Բորդ» միսիոներական ընկերության «Missionary Herald» պաշտոնական ամսագրի երկու հոդվածներ, որոնք նույնպես լույս են սփռում «Բանալու» հեղինակի խնդրի վրա:

Բ բաժնում՝ վերնագրված **«Կարծիքներ հեղինակի և գրության տարեթվի վերաբերյալ»** ներկայացված են հրապարակում եղած ուսումնասիրությունները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են «Բանալի ճշմարտութեան» գրության ժամանակի և հեղինակային պատկանելության հարցին: Հավի են առնվում եղած գիտական բոլոր մոտեցումները: Զննարկվում են, մասնավորապես այն հարցերը, թե արդյոք «Բանալու» մեզ հասած ձեռագիրը բնօրինակն է, թե ընդօրինակություն, և եթե բնօրինակն է, ապա որ թվականին է գրվել: Ելակետ է ընդունվում Ֆ. Կոնիբիրի տեսակետը, որը «Բանալի ճշմարտութեան» տեքստի հրատարակիչն է: Կոնիբիրի երկի հեղինակ է համարում թոնդրակեցի առաջնորդ Սմբատ Ջարեհավանցուն, իսկ մեզ հասած գրչագիրը՝ 1782 թ. արված ընդօրինակություն: Գիտնականների մի մասը համակարծիք է Կոնիբիրի առաջադրած տեսակետին (Գ. Տեր-Սկրտչյան, Ն. Գարսոյան, Ջ. Հաքսլի): Ֆ. Կոնիբիրի տեսակետի պաշտպանության դիրքերում են կանգնած նաև Հայ ավետարանական եկեղեցու պատմագիրները (Լ. Արփի, Ա. Կեօրկիզյան և այլք): Գիտնականների մյուս խումբը, «Բանալի ճշմարտութեան» հեղինակի և գրության տարեթվի առեղծվածը լուծելիս, շատ ավելի ինքնուրույն դատողությունների է հակված (Բ. Սարգիսյան, Կ. Տեր-Սկրտչյան, Պ. Լեմերլ և այլք): Վերոնշյալ գիտնականների մի մասը հեղինակ է համարում սկզբնաղբյուրներում հիշվող Հովհաննես երեցին (նաև՝ Հովհաննես Շուշղյակ Վարդապետեան), մյուս մասն էլ՝ «Բանալու» հիշատակարանում հիշվող

«յոհաննես վահագունյն», որը հետագայում գիտական հրապարակումներում հանդիպում է Հովհաննես Վահագունցի ձևով:

«**«Բանալի ճշմարտութեան» գրչի ժամանակը և հեղինակը**» Գ բաժնում սկզբնաղբյուրների համադրության արդյունքում և մասնավորապես «Բանալի ճշմարտութեան» երկի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա որոշվում է երկի գրության և ընդօրինակության ստույգ թվականը, ինչպես նաև ապացուցվում է, որ երկի հեղինակն է Հովհաննես երեցը:

Ապացուցվում է, որ երկի բնօրինակը գրվել է 1782 թվականին (ըստ հայոց՝ ՌՄԼ)՝ Հովհաննես երեցի ձեռքով, և ընդօրինակվել 1811 թվականին (ըստ հայոց ՌՄԿ)՝ անվարժ մի գրչի կողմից: Հավանաբար գիրքն ունեցել է նաև ուրիշ մեկ կամ երկու ընդօրինակություններ, որոնք մեզ չեն հասել:

Երրորդ՝ «**«Բանալի ճշմարտութեան» գրչի լեզուն և բովանդակությունը**» ենթագլուխը բաժանվում է երկու մասերի: Ա մասում՝ **«Երկի լեզուն»**, եղած գիտական ուսումնասիրությունների քննության արդյունքում հստակեցվում է, որ երկի լեզուն չի կարող լինել 10-րդ դարի, ինչպես պնդում են Ֆ. Կոնիբիրը, Ն. Գարսոյանը և ուրիշներ, քանի որ այն աչքի է ընկնում իր ոճական գոեհկաբանություններով, որոնք հատուկ են ուշ միջնադարյան գրաբարիին: Այս հարցում ուղեցուցիչ են հանդիսանում հատկապես Ա. Մեյեի, Ֆ. Մակլերի, Պ. Լեմերլի գրախոսականները, որոնք բոլորն էլ երկի լեզուն համարում են 18-19-րդ դարերի:

«**Երկի բովանդակությունը (ուսումունքը)**» բավականին ծավալուն Բ մասում տրվում է աղբյուրների համառոտ տեսություն, անդրադարձ է կատարվում նախորդ ուսումնասիրողների եզրակացություններին: Այս մասում լուսաբանվում են «Բանալի ճշմարտութեան» ուսմունքային բոլոր շերտերը և սկզբունքները: Երկի ուսումունքը աչքի է ընկնում իր որդեգրական բովանդակությամբ և մանկամկրտության մեծամասն, տեսանելի են կրկնամկրտական և մկրտական ուսմունքի տարրեր: «Բանալի ճշմարտութեան» երկում դատապարտվում են «լատին, յոյն և հայ» եկեղեցիները, այսինքն՝ Ընդհանրական եկեղեցին: Ձեռագրում հստակ ընդգծված է վաղ՝ առաքելական և տիեզերածողվների ժամանակների եկեղեցիների տարբերությունը: «Ճշմարիտ» է համարվում վաղ շրջանի եկեղեցին, մասնավորապես այն պատճառով, որ, իբրև, մերժում էր մանուկների մկրտությունը:

Հիմնավորվում է, որ «Բանալի ճշմարտութեան» գրչի բովանդակությունը բազմաշերտ է: Առանցքային թեմաներն են քրիստոսաբանական, ինչպես նաև ապաշխարության, մկրտության և հաղորդության խորհուրդներին աղերսվող թեմաները, որոնք էլ հիմնականում գրավել են ուսումնասիրողների ուշադրությունը: Մեծ տեղ է հատկացվում նաև մեղսագործության, չարի, մարիամաբանական և վախճանաբանական ուսմունքներին: Երկում ընդունվում են երկու խորհուրդներ՝ մկրտության և հաղորդության: Հաղորդության ծեսը նման է բողոքականին, իսկ խորհուրդի աստվածաբանությունը՝ Հայ եկեղեցու հաղորդության աստվածաբանությանը: «Բանալի ճշմարտութեան» հեղինակը երկը գրելիս օգտվել է նաև ասյպես կոչված «արտաքին գրեանք»-ից:

Ներկայացվում է «Բանալու» բազմաշերտ բովանդակության մարակրկիտ վերլուծությունը: Հատկապես վեր են հանվում երկի քրիստոսաբանության հարուստ որդեգրական տարրերը: Երկում քրիստոս հորջորջվում է «լարարածն

նոր) մարդն Յիսուս», իսկ Չայրը «[արարիչն իւր]», որը «հաճեցաւ [ստեղծել] զնոր Ադամ ի նոյն խաբէական յարեմէ»: Կարևոր է նշել, որ «Բանալու» ուսմունքի համաձայն Քրիստոս, մկրտվելով «հրամանաւ հօրն երկնաւորի երեսուն ամա... ի ժամանակի կատարելութեան՝ էառ զմկրտութիւն, էառ անդ զիշխանութիւն, էառ զբաժանապատկութիւն, էառ զթագաւորութիւն և զհովապետութիւն: ... անդ եղև փրկիչ մեզ մեղաւորացս, անդ լցաւ աստուածութեամբ, անդ կնքեցաւ, անդ օծեցաւ... անդ եղև գառն անարատ... Նաև անդ զգեցաւ զլուսեղէն պատմունձանն զառաջինն, զոր կորոյս Ադամն ի դրախտին»: Փաստորեն, ստեղծված լինելով մարդ, Քրիստոս մկրտության ժամանակ որդեգրվում է Յորը՝ Սուրբ Յոզու Շնորհով ստանալով որդիություն:

Ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում տեսանելի են նաև երդմնեցուցության ծեսի հետքեր, ինչը շատ տարածված էր վաղ եկեղեցուն և մկրտության արարողության մախապատրաստական փուլի անքակտելի բաղադրիչներից էր:

Ի դեպ, «Բանալի ճշմարտութեան» երկուն տեսանելի է նաև հազարամյայի կամ խիլիազմի (χίλις - հազար) մասին ուսմունքի յուրահատուկ մի տարբերակ: Այն շարադրվում է ձեռագրի առաջին էջերում, որտեղ հեղինակը հայտնում է, թե Քրիստոսից և առաքյալներից հետո որոշ ժամանակ անց սատանան ազատ է արձակվել՝ մարդկանց զայթակղելու և կործանելու համար: Չազարամյայի խեղաթյուրված գաղափարների հետքերը տեսանելի են նաև արխիվեցի աղանդավորների խոստովանագրերում:

Երկի բովանդակության վերլուծությունը կատարվում է բազմապիսի սկզբնաղբյուրների համադրությամբ, օրինակի համար՝ համեմատվում է «Դիդախեի», Տերտուլիանոսի, Գրիգոր Նագիանզացու, Առաքել Սյունեցու և այլոց երկերի համապատասխան դրույթների հետ:

Երկրորդ գլուխը՝ ««Բանալի ճշմարտութեան» գիրքը՝ որպես որդեգրական եկեղեցու դավանաբանական ձեռնարկ» վերնագրով, ստորաբաժանված է երեք ենթագլուխների: Առաջին ենթագլուխը՝ «Բանալի ճշմարտութեան» երկը որդեգրականության ուսմունքի համատեքստում», բաղկացած է երկու մասերից: Ա մասում՝ «Քրիստոնեական որդեգրականության պատմությունից», Եվսեբիոս Կեսարացու և Չիպպոլիտոսի երկերի հենքի վրա համառոտակի ներկայացված է Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչ Պողոս Սամոսատցու (2-րդ դ.) ուսմունքը, որը հետագայում ստացավ որդեգրականություն անունը, քանի որ Սամոսատցին Քրիստոսին համարում էր հասարակ մարդ, որը մկրտության ժամանակ աստվածային շնորհով որդեգրվել էր Աստծուն: Բ մասում՝ ««Բանալի ճշմարտութեան» երկը և որդեգրականության ուսմունքն ըստ Ֆրեդերիկ Կոնիբիթի», ընդհանուր գծերով ներկայացվում է կոնիբիթյան հայտնի վարկածը: Յույց է տրվում, որ «Բանալի ճշմարտութեան» երկը որդեգրականության ուսմունքի համատեքստում հայտնվեց մասնավորապես շնորհիվ հայագետ Ֆ. Կոնիբիթի, որն այն հայտնաբերելով և տեսնելով որդեգրականության տարրերը՝ գերազնահատում է դրա դերն ու նշանակությունը քրիստոնեության պատմության մեջ, և, հենվելով բացառապես «Բանալու» բովանդակության վրա, փորձում ապացուցել, որ վաղ քրիստոնեական եկեղեցին եղել է որդեգրական:

Փորձ է արվում պարզելու, թե արդյոք կան առնչություններ որդեգրականության և պավլիկյան-թոնդրակյան աղանդների միջև, և արդյոք այս աղանդները կարող էին հիմք լինել եվրոպական բարեկարգության համար: Ապացուցվում է, որ պավլիկյան գաղափարախոսությունը զնոստիկյան էր, դուալիստական տարրերով, որից մեծապես ազդվել էր բոգոմիլյան աղանդը:

Քննության են առնվում մախորդ ուսումնասիրողների՝ Կ. Տեր-Սկրտչյանի, Ա. Նեանդերի, Ա. Գրեգուարի, Ֆ. Շնայրվայլերի, Ի. Անաստասիուի և այլոց հայացքները, որոնք հիմնվելով պավլիկյանների վերաբերյալ բյուզանդական աղբյուրների վրա, հերետիկոսության սաղմերը տեսնում են մանիքեականության, մարկիոնականության, կամ էլ մոնոսականության մեջ: Ապացուցվում է, որ Կոնիբիթի առաջադրած նոր՝ որդեգրական վարկածը պատմական փաստերով չի հիմնավորվում:

Երկրորդ ենթագլուխը՝ «Պավլիկյան աղանդի գաղափարախոսությունն ու «Բանալի ճշմարտութեան» ձեռագիրը» նույնպես բաժանված է երկու մասերի: Ա մասում՝ «Վարկածներ «պավլիկյան» անվանման շուրջ», քննվում են «պավլիկյան» անվան առաջացմանն ու ծագումնաբանությանը վերաբերող որոշ տեսակետներ: Ելակետ է հանդիսանում Ֆ. Կոնիբիթի վարկածը, համաձայն որի «Παυλικισμοί» (պավլիկյան) անվանումը -իկ և -յան մասնիկներով կազմված զուտ հայկական անվանում է: Ատենախոսության այս ենթամասում հատուկ ուշադրության է արժանանում -իկ մասնիկը, մեջբերվում են մի նոր աղբյուր՝ Թեոդորոս Թեոդորիդիս կիսասարկավագի տեղանունների բառարանից երկու փոքրիկ տեքստեր, որտեղ Պողոս անվան համար կիրառված են «Παυλάκη» (պավլակի) և «Παυλιτοϋς» (պավլիցիս) անունները: Սրանցից առաջինը կիրառվում է որպես անձնանուն, իսկ երկրորդը՝ սրբատեղիի անուն, որը գտնվում էր պավլիկյանների կենտրոն Տիվրիկից ոչ շատ հեռու: Այս առնչությամբ ներկայացվում են -իկ մասնիկով վերջացող մի շարք հայկական անուններ, որոնք հանդիպում են բյուզանդական աղբյուրներում: Շեշտադրվում է այն հանգամանքը, որ -իկ մասնիկը հնդեվրոպական է և կարող էր փաղաքշական իմաստ ունենալ նաև հունարեն լեզվում:

Բ մասում՝ Սի քանի կեղծ-պավլիկյան աղբյուրների վերլուծություն, քննության են առնվում 4 աղբյուրներ, որոնք ըստ որդեգրականության տեսակետի կողմնակիցների տեղեկություններ են պարունակում պավլիկյանների մասին, սակայն անտեսվել են ուսումնասիրողների կողմից: Առաջին աղբյուրը «Սեր սուրբ հայր Իսահակի, Սեծ Չայքի կաթողիկոսի» («Կեղծ Սահակ») անունով պահպանված երկու ճառերն են («Բան ընդդիմութեան ընդդէմ հայոց» (Λόγος στήλιτευτικός κατά Ἀρμενίων), «Բան ընդդիմութեան Իսահակի յաղագս չարափառ և հերետիկոս հայոց» (Λόγος στήλιτευτικός τοῦ Ἰσαάκ περὶ τῶν κακοδόξων Ἀρμενίων καὶ αἰρετικῶν)), որոնցում Չայքը եկեղեցին մեղադրվում է զանազան միաբնակ հերետիկոսությունների մեջ: Կոնիբիթի կարծիքով, ի թիվս այլոց, այստեղ ծածուկ կերպով ակնարկվում են նաև պավլիկյանները:

Աշխատության այս մասում «Narratio de Rebus Armeniae» գրվածքի հետ համեմատության մեջ ցույց է տրվում, որ «կեղծ Սահակի» ճառերը գրվել են հայ քաղկեդոնիկ մի քահանայի կողմից 12-րդ դ. առաջ՝ 8-րդ և 11-րդ դդ. միջև: Հիմնավորվում է, որ դրանք մեծ ազդեցություն են ունեցել Եվրոպայի Զիգաբենոսի

“Πανοπλία δογματική” (վարդապետական սպառազինություն) աշխատության հայերի դեմ գրված գլխի ձևավորման վրա, սակայն ի տարբերություն «կեղծ Սահակի» ճառերի Ձիգաբեցու առանձին մի գլուխ էլ հատկացնում է պավլիկյաններին՝ հենվելով հիմնականում Փոտի՝ պավլիկյանների դեմ գրված թղթի վրա:

Այսպես ցվում է, որ «Կեղծ Սահակի» ճառերը պավլիկյանների դեմ մեղադրանքներ չեն պարունակում, իսկ բոլոր այն ուսմունքային կետերը, որոնք մատնանշում էր Կոնիբիրը որպես պավլիկյանների դեմ մեղադրանքներ, իրականում միաբնակության մեջ մեղադրանքներ են և ուղղված են Հայոց եկեղեցու դեմ: Բերվում են համապատասխան հունարեն տեքստերը և դրանց հայերեն թարգմանությունը, որոնք լուսաբանում են, որ այս ճառերը պավլիկյանների վերաբերյալ ոչինչ չեն հաղորդում:

Հաջորդ աղբյուրը Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ պահպանված Գագիկ Բ Աբասյանի Կոստանդին 10-րդ Դուկաս (Տուկիծ) կայսրին գրած հավատո գիրն է, որտեղ Ֆ. Կոնիբիրը պավլիկյանների դեմ ուղղված մեղադրանքներ է փնտրում: Հիմնավորվում է, որ վերջինս չփոքում է 4-րդ դ. հերետիկոս Եվտիքեսին թոնդրակյան Սերգիոս-Տյուֆիկոսի հետ:

Երրորդ աղբյուրը Դավիթ Անհաղթի «Ներբողեան Խաչին» կամ հայտնի «Բարձրացուցեք»-ն է, որի նախաբանում նկարագրված է, թե ինչպես են «յաւուրս վերադիտողութեան Հայոց Տեառն Գիւտայ» Ասորիքի Օշին գյուղից Հայաստան գալիս ճգնախյաց աղանդավորներ, որոնց Ֆ. Կոնիբիրը պավլիկյաններ է համարում:

«Բարձրացուցեք» ճառի նախաբանում Գյուտ կաթողիկոսի Դավիթ Անհաղթին ուղղված ճառի, ինչպես նաև մի նոր աղբյուրի՝ Գրիգոր Աբասյանի «Գիրք պատճառաց»-ի հիման վրա հիմնավորվում է, որ Դավիթ Անհաղթը «Բարձրացուցեք»-ը գրել է ոչ թե պավլիկյանների, այլ մետոքականների դեմ:

Վերջին աղբյուրը, որում իբրև ակնարկվում են պավլիկյանները, Ղազար Փարպեցու «Պատմութիւն»-ն է: Պատմիչը հիշում է «հայոց աշխարհի աղանդը», որի մասին գրում է, թե «ըստ խոզի հարսնացելոյ՝ կոյաջուր բաղանիք»: Ըստ որդեգրականության վարկածի կողմնակիցների պատմիչը նկատի ունի հին որդեգրական-պավլիկյաններին: Համեմատական վերլուծությամբ և աղբյուրների համադրությամբ ապացուցվում է, որ Ղազար Փարպեցին ծանոթ էր խիկարի խրատներին, ասացվածքը վերցրել էր նրա երկից և կիրառում է այն աղանդավորների նկատմամբ հավանաբար ցույց տալու համար, որ «հայոց աշխարհի աղանդ» կոչվածն իր անհեթեթ ուսմունքը մյուս աղանդներից էր սովորել, քանի որ իրենք տգետ էին և անուսում:

Երկրորդ՝ «Բանալի ճշմարտութեան» գրքի և թոնդրակեցիների առնչությունները Ֆրեդերիկ Կոնիբիրի տեսության մեջ, ենթազույգում նույնպես բաժանվում է երկու մասի: Ա մասում «Սմբատ Ջարեհավանցու անձի վերաբերյալ վարկածները» ներկայացվում և մանրակրկիտ քննական վերլուծության են ենթարկվում թոնդրակյան առաջնորդ Սմբատ Ջարեհավանցու անձի շուրջ եղած տեսակետները: Հարցին անդրադարձ է կատարվում այն պատճառով, որ որդեգրականության վարկածի հեղինակ Ֆ. Կոնիբիրը հենց վերջինիս է համարում «Բանալու» գրիչ-խմբագիրը: Կոնիբիրը նույնացնում է Սմբատ Ջարեհավանցուն Բագարատ Բագ-

րատունու, երբեմն էլ Սմբատ Խոստովանողի, մեկ այլ տեղում էլ Խոսրով Շընունի անձերին՝ անտեսելով իր ենթադրությունների ժամանակավրեպությունը:

Ցույց է տրվում, որ գիտնականն այս վարկածներն առաջադրում է երկու հիմնական նպատակով: Առաջին՝ թոնդրակյան աղանդը «հնացնելու» համար՝ վերջինիս ծագումը տանելով ավելի վաղ շրջան՝ ընդհուպ մինչև 600-ական թվականները, և երկրորդ՝ ամեն գնով Սմբատ Ջարեհավանցուն «դարձնելու» ազնվազուն, մասնավորապես, Բագարատունիների տոհմակից իշխան: Հիմնավորվում է, որ Սմբատ Ջարեհավանցու անձը ոչ մի կապ չունի վերոբերյալ անձնավորությունների հետ:

Բ մասում՝ վերնագրված «Խութեցիների դավանական ինքնության խնդիրը» անդրադարձ է կատարվում թովմա Արծրունու երկում հիշվող խրթնախոս, գագանաբարո, բայց տիրասեր խութեցիներին, որոնք ապստամբում են արաբ Յուսուֆի դեմ: Ֆ. Կոնիբիրը, շփոթելով Սմբատ Ջարեհավանցու և Բագարատ Բագարատունու անձերը, սրանց համարում է պավլիկյան-թոնդրակեցիներ կամ հայ պուրիտաններ:

Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ խութեցիները 18-րդ դ. Պողոս Սեհերյանի հիշած «կեսկեսների» և 19-րդ դ. Դիարբեքիի հյուպատոս դուքս Դ. Թեյլորի նկարագրած «բալիկի»-ների նախահայրերն էին, որոնք ոչ ղզլբաշներ էին, ոչ արևոդրիներ և ոչ էլ թոնդրակեցիներ, ինչպես ենթադրում էր Ֆ. Կոնիբիրը: Ազգագրական նյութի հենքի վրա ցույց է տրվում, որ «կեսկեսները» առնչություն չունեին կաշեցի թոնդրակեցիների հետ, այլ «կեսկես» էին կոչվում կես-քրիստոնյա, կես-մահմեդական լիմելու պատճառով:

Ատենախոսության երրորդ գլուխը «Պավլիկյան-թոնդրակեցիների և Հայ ավետարանական եկեղեցու ժառանգորդական կապերի վարկածը», ստորաբաժանված է երեք ենթագլուխների: Առաջին ենթագլխում «Բանալի ճշմարտութեան» երկի և պավլիկյան-թոնդրակյան ուսմունքների բովանդակային առնչությունների շուրջ», բյուզանդական և հայկական աղբյուրների համադրությամբ համեմատվում են պավլիկյան և թոնդրակյան ուսմունքները «Բանալի ճշմարտութեան» ուսմունքի հետ: Պավլիկյան և թոնդրակյան ուսմունքների համեմատությունը «Բանալի ճշմարտութեան» ձեռագրի բովանդակության հետ վեր է հանում ոչ միայն «Բանալու» և այս աղանդների միջև եղած կտրուկ հակասությունները, այլև տեսանելի է դարձնում պավլիկյան և թոնդրակյան աղանդների տարբերակիչ գծերը: Ցույց է տրվում, որ «Բանալի ճշմարտութեան» երկի ուսմունքն ավելի շատ տարբերվում է պավլիկյան և թոնդրակյան գաղափարախոսությունից, քան նմանվում, թեև հնարավոր չէ անտեսել, ձեռագրի և բողոքական գաղափարների, մասնավորապես մկրտականության և կրկնամկրտականության միջև առկա հստակ նմանությունները, որոնք էլ ըստ էության առիթ են տալիս որոշ գիտնականների «Բանալու» միջոցով այս աղանդները բողոքականությանը առնչելուն:

Երկրորդ՝ «Ֆրեդերիկ Կոնիբիրի վարկածի արծարծումը ավետարանական հեղինակների կողմից» ենթագլխում հիմնավորվում է, որ «Բանալի ճշմարտութեան» երկի ուսմունքի մասին Ֆ. Կոնիբիրի դատողությունները բավարար հիմք չեն Հայ ավետարանական եկեղեցու ուսմունքը պավլիկյան-թոնդրակյան ուսմունքներին առնչելու համար, ինչպես փորձում են ցույց տալ Հայ ավետարանա-

կան եկեղեցու որոշ պատմագիրներ՝ պնդելով, որ Հայաստանում բողոքական գաղափարները «ծպտվել» են պավլիկյան-թոնդրական ուսմունքների քողի տակ և, անցնելով Եվրոպա, բողոմիների և ալբիզացիների միջոցով հիմք են դրել Եվրոպական բարեկարգությանը:

Քննվում են Հայ ավետարանական եկեղեցու պատմագիրների մեծ մասի տեսակետները խնդրո առարկայի վերաբերյալ: Հրապարակում եղած նյութի ուսումնասիրության հենքի վրա ապացուցվում է, որ Հայ ավետարանական եկեղեցին պավլիկյան և թոնդրական աղանդների ժառանգորդը չէ և իր կազմակերպման համար պարտական է ամերիկացի քարոզիչներին, որոնք 1830-ական թթ. «Բորդ» միսիոներական ընկերության կողմից ուղարկվել են Օսմանյան Կայսրության տարածք և Կոստանդնուպոլսում քարոզչական գործունեություն ծավալել: Փաստվում է, որ Հայ ավետարանական եկեղեցին կազմակերպվել է միսիոներական գործունեության արդյունքում և 1847 թ. ստացել «միլլեթի»՝ էթնոսի կարգավիճակ:

Երրորդ ենթազվածում «Հայ ավետարանական եկեղեցու պատմագիրները և ժառանգորդն հարցը», քննության է առնվում մասնավորապես Հայ ավետարանական եկեղեցու պատմագիր Լևոն Արփիի տեսակետը, համաձայն որի «Բանալի ճշմարտութեան» երկի ուսմունքը դավանող աղանդավորները, որոնք հիշվում են նաև որպես «պահք ուտողը» և ամերիկացի միսիոներների հիշած «ուղիները» նույնն են, որոնք էլ հին պավլիկյանները կամ թոնդրակեցիներն են: Այստեղ ազգագրական նյութի հիման վրա ցույց է տրվում, որ ուղիները Ուտյաց աշխարհի Ուտի առանձնակի բնակիչներն էին և «պահք ուտողը» պայմանական անունով աղանդավորների հետ առնչություններ չունեին:

Ատենախոսության հավելվածները չորսն են՝ հինգ արխիվային փաստաթղթեր (Գյումրեցի և արխիվացի աղանդավորների խոստովանագրերը (ԱԱ, Ֆոնդ 56, ցուց. 1, գործ 56)), մեկ արխիվային չուսումնասիրված գործի պատմություն (Բալանդուր գյուղի քահանա Սահակ Փլատյանցի անօրինական արարքների մասին (ԱԱ, Ֆոնդ 56, ցուց. 1, գործ 1981)), «Բանալի ճշմարտութեան» գրչագրի որոշ կարևոր էջերի լուսապատճեններ: Վերջին հավելվածում ներկայացված են գրչագրի բնագրի և հրատարակված տեքստի համեմատական աղյուսակները:

Եզրակացություններ: «Բանալի ճշմարտութեան» երկի համալիր ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Աղանդավորները, որոնք գաղթել էին Արևմտյան Հայաստանի խնուս գավառի Չևիրմե գյուղից և հաստատվել Շիրակի մարզի Երրորդ Արխիվացի գյուղում՝ իրենց հետ բերելով «Բանալի ճշմարտութեան» ձեռագիրը, «նոր-թոնդրակեցիներ» են որակվել էջմիածնի Սիմոնի փաստաթղթերում ոչ թե աղանդի մանրագին ուսումնասիրությունից հետո, այլ պատահամա՞ր՝ առաջին հայացքից թոնդրակեցիների գաղափարախոսության հետ ընդհանուր գծեր ունենալու պատճառով: Հետագայում «նոր-թոնդրակեցիներ» անունն օգտագործել է Ալ. Երիցյանը, ինչն էլ առիթ է տվել այս աղանդավորներին անվերապահորեն համարել թոնդրակեցիներ: Իրականում, սրանք թոնդրակեցիներ չէին, և իրենց ուսմունքով ավելի մոտ էին բողոքականներին, քան թոնդրակեցիներին: Ավելին, հետագայում սրանք ձուլվեցին տեղի մոլոկանների կամ ավետարանականների հետ, ինչի պատճառը, մեր կարծիքով, ոչ միայն ուսմունքային նմանություններն էին, այլև արարողա-

կարգերի հարազատությունը: Ամերիկացի քարոզիչների հաղորդած տեղեկությունների համաձայն խնուսում դեռ 1850-ական թվականներին տարածված էր այս աղանդը և այստեղ էին աճուր հեմարան գտնում ավետարանական քարոզիչները:

2. Ամերիկացի միսիոներների վկայություններից երևում է, որ Արխիվացու աղանդավորներից երկուսն իրենց ընտանիքներով վերադարձել են Արևմտյան Հայաստան՝ իրենց գյուղը, իսկ հետագայում միացել էր գյուղում կայանած բողոքականներին: Ինչ վերաբերում է մնացած աղանդավորներին, որոնք ըստ Ալ. Երիցյանի, աքսորվել էին Սիբիր, ապա Երրորդ Արխիվացի գյուղի 1850-1868 թթ. չափաբերական մատյաններում պահպանվել են նրանցից ոմանց անունները, անգամ մահվան թվականներն ու պարագաները: Նշանակում է, որ սրանք կամ չեն աքսորվել, կամ էլ աքսորից շատ շուտ վերադարձել են:

3. «Բանալի ճշմարտութեան» ձեռագրի առաջին էջի աղճատված 1882 թվականի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ապացուցելու, որ սկզբում գրված է եղել 1811 թվական (ըստ հայոց ՌՄԿ), հետո հավանաբար աղանդավոր Գևորգ Սարգիսյանի ձեռքով վերջին երկու թվերը փոխվել են, և դարձել է 1832: Հենց այս թվականն է հանդիպում արխիվային փաստաթղթերում՝ որպես գրքի առաջին էջին դաջված թվական: Ավելի ուշ 1832 թվականն էլ վերածվում է 1882՝ հավանաբար դիվանի գրչի կողմից, սակայն հայոց թվականը մնում է ՌՄԼ: Այն հանգամանքը, որ ձեռագրի տիտղոսաթերթին նշված վավերական թվականը 1811-ն է (ըստ հայոց՝ ՌՄԿ), որը հետագայում երկու անգամ աղճատվել է, իսկ հիշատակարանում նշված է 1782 թվականը (ըստ հայոց՝ ՌՄԼ), ապացուցում է, որ ձեռագիրը ընդօրինակություն է:

4. «Բանալի ճշմարտութեան» ձեռագրի հեղինակը Հովհաննես երեցն է, որի վերաբերյալ տեղեկություններ են տալիս Պողոս Մեհերյանը, Կոստանդնուպոլսի հայոց Ջաքարիա պատրիարքը և ամերիկյան «Բորդ» միսիոներական ընկերության Օսմանյան կայսրություն գործուղված քարոզիչները: Ձեռագրի հիշատակարանում հիշվող «յոհաննեսին վահագունոյն»-ն ուսումնասիրողները վերածել են Հովհաննես Վահագունի անունով անձի և նրան համարել կամ ձեռագրի ընդօրինակության պատվիրատուն, կամ ընդօրինակողը: Հնարավոր է, որ «վահագունոյն» բառը ոչ մի կապ չունենա «-ունի» մասնիկով վերջացող ազգանվան հետ, այլ լինի «վահագունոյ» բառի աղավաղված ձևը, քանի որ այս ձեռագիրն աչքի է ընկնում իր ոչ գրագետ շարադրանքով: Թերևս «յոհաննեսին վահագունոյն» արտահայտությունը վերաբերում է Հովհաննես երեցին, որն անշուշտ ազդված էր բողոքական գաղափարներից, որտեղ «վահագունոյն»-ն պատվի նշան էր, որով նրան օժտել էր ընդօրինակող գրիչը, ճիշտ այնպես, այնպես ինչպես «պատվելի» և «վերապատվելի» տիտղոսները բողոքականների շրջանում: «Բանալու» մեջ շարադրված ուսմունքն ամենավաղ վկայությունն է այն բանի, որ Հովհաննեսը եղել է կիսագրագետ մի երեց՝ Սիմեոն Երևանցու նկարագրած թափառական, շրջիկ հոգևորականների նման, որն ազատորեն փոխում էր կրոնն ու դավանանքը, մտնում տնետուն, մտերմանում իշխանավորների հետ և ծանոթանում ժամանակի դավանաբանական տարբեր ուղղվածություններին (տեղեկացնենք):

Նույն Սիմեոն Երևանցու վկայություններից հասկանալի է, որ 18-րդ դարում անգլիացի և գերմանացի բողոքականներն արդեն լուրջ միսիոներական գործու-

նեություն էին ծավալել Օսմանյան կայսրության և Պարսկաստանի տարածքում, թեև պաշտոնական այցով անգլիացի և ամերիկացի միսիոներներն այս տարածքներ են այցելել 19-րդ դարի սկզբերին: Հնարավոր է, որ, ինչպես Կ. Տեր-Սկրտչյանն էր եզրակացնում, Հովհաննես երեցն Իտալիայում ծանոթացած լինելով *անաբապտիստների, վալդեսյանների* և այլ աղանդավորական խմբերի գաղափարախոսությանը, սակայն մեր կարծիքով նրա ծանոթությունը հատկապես անգլիական բողոքականության գաղափարներին եղել է հենց տեղի բողոքական քարոզիչների հետ շփումների շնորհիվ:

5. «Բանալու» ճշմարտութեան» ձեռագրի լեզուն և ոճը նոր ժամանակների են, ինչի մասին վկայում են ձեռագրի որոշ արտահայտչաձևեր: Ոչնչով չի ապացուցվում, որ ձեռագիրը գրվել կամ խմբագրվել է 10-րդ դարում Սմբատ Ջարեհավանցու կողմից: Ձեռագրում տեղ գտած աղոթքները չեն կարող 4-րդ դարի լինել, իսկ այն հանգամանքը, որ սրանց շարադրանքն ավելի մոտ է դասական հայերենին, վկայում է հեղինակի եկեղեցական աղոթքներին և շարականներին ժամոթ քահանա լինելու մասին, ով կարող էր ոճական նմանություն ստեղծել սրանց հետ:

6. Գրքի ուսմունքը պավլիկյան կամ թոնդրակյան ուսմունք չէ, ինչպես պնդում են ուսումնասիրողների մեծ մասը, և ոչ էլ զուտ բողոքական, ինչպես փորձում են ներկայացնել Ա. Ղազարյանն ու Ռ. Լևոնյանը: «Բանալու» ուսմունքը «նորահնար» մի ուսմունք է, յուրահատուկ մի համաձուլվածք, որտեղ միացած են հակալատիական միտումները, առաքելական ծեսերից և դավանաբանական բանաձևերից որոշ հատվածներ, հստակ բողոքական սկզբունքներ, պարականոն գրականության, ինչպես նաև տեղի ասորիների և բազմազան աղանդավորական խմորումների ազդեցությունները: Կարելի է ասել, որ «Բանալու» ուսմունքն իր ժամանակի դավանաբանական խճանկարի և անկազմակերպվածության արտացոլումն է, որն արտահայտվել է ձեռագրում տարբեր ուսմունքային շերտերի միաձուլման միջոցով:

Չի կարելի ժխտել, որ ձեռագրի հեղինակի գաղափարախոսությունը որոշ կետերով նման է թոնդրակյանին, բայց ավելի շատ մոտ բողոքական գաղափարներին: Անշուշտ, որոշ աղանդավորական հայացքներ կարող են արտացոլված լինել ձեռագրում, սակայն դրանք հստակ սահմանագծված չեն և հնարավոր չէ ասել, թե ինչ տեղական աղանդի հետքեր են: Այս ամենով հանդերձ երկի ուսմունքն ունի ընդգծված հակալատիկական ուղղվածություն, քան հակահայադավան կամ հակահունդավան, ինչն էլ ավելի է շեշտում ձեռագրի բողոքական ենթատեքստը:

7. «Բանալու» ուսմունքի վրա խարսխված Ֆ. Կոնիքիի և նրա տեսակետն արծարծող գիտնականների որդեգրականության մասին վարկածը լուրջ պատմական հիմնավորում չունի: Պավլիկյան աղանդն ավելի գնոստիկյանին է նման՝ իր դուալիստական տիեզերածնությամբ, «Բանալու» ուսմունքից խիստ տարբեր, ինչի վառ վկայությունն է դրանից սերող բոգոմիլների, ալբիզացիների, կաթարոսների և այլ միջնադարյան եվրոպական աղանդների գնոստիկյան դուալիստական գաղափարախոսությունը: Գրվածքները, որոնք Ֆ. Կոնիքիի և այլոց կողմից առաջարկվում են որպես պավլիկյանների և թոնդրակեցիների ուսմունքը ներկայացնող նոր աղբյուրներ իրականում կապ չունեն վերջիններիս հետ: Ավելին, կարելի է ասել, որ թոնդրակեցիների վերաբերյալ պահպանված հայկական աղբյուր-

ների միջոցով պավլիկյանների ուսմունքը ներկայացնելը լավ մեթոդ չէ, քանի որ սրանք նման, բայց այնուամենայնիվ տարբեր աղանդներ էին: Սրանից բացի, «Բանալու» և պավլիկյան ու թոնդրակյան ուսմունքների մանրակրկիտ համեմատությունը (բյուզանդական և հայկական աղբյուրների հեռքի վրա) վեր է հանում դրանց միջև եղած լուրջ տարբերությունները:

8. «Բանալու» հեղինակը կամ խմբագիրը թոնդրակյան առաջնորդ Սմբատ Ջարեհավանցին չէ, և այս տեսակետը սատարող հետազոտողների բերած պատմական բոլոր փաստերն ու առաջադրած վարկածներն անհիմն են: Պավլիկյան աղանդի ծագումը հայ տոհմիկների հետ կապելու միտումով Ֆ. Կոնիքիը շփոթում է Սմբատ և Բագարատ Բագարատունիների անձերը, ինչի արդյունքում մենք տեսնում ենք մի նոր անձի՝ Սմբատ-Բագարատին, որն էլ, ըստ Կոնիքիի, հնարավոր է լինել Սմբատ Ջարեհավանցին: Սեկ ուրիշ տեղում Կոնիքիը պավլիկյան շարժումն ավելի վաղեմացնելու միտումով Սմբատ Ջարեհավանցուն նույնացնում է Խոսրով Շընուհի հետ: Երկու վարկածներն էլ պատմական փաստերի լույսի ներքո հերքվում են:

9. Հայ ավետարանական եկեղեցին պավլիկյան կամ թոնդրակյան աղանդների ժառանգորդը չէ, այլ 19-րդ դ. կեսերին ամերիկացի բապտիստ միսիոներների ջանքերով ձևավորված մի կառույց, որի գաղափարները քիչ թե շատ մոտ են «Բանալու» ճշմարտութեան» ուսմունքին միայն այն պատճառով, որ վերջինս էլ անգլիական բողոքականության ազդեցությունը կրող մի հուշարձան է: Հայ Ավետարանական եկեղեցու որոշ պատմագիրների կողմից իրենց եկեղեցու պատմությունը ոչ միայն վաղեմացնելու, այլև ավելի «հայացնելու» համար «Բանալու» ուսմունքի վրա հիմնվելը լավ մեթոդ չի կարող համարվել:

Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների աստվածաբանական ըմբռնումների տարբերակիչ գծերը, «Վասն Արդարութեան», 5(55), 2005, էջ 81-86:
2. Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների նվիրապետական և պաշտամունքային համակարգերի տարբերությունները, «Էջմիածին», Է-Ը, 2006, էջ 120-128:
3. Հայաստանում նախամիսիոներական ավետարանական խմորումների վերաբերյալ վարկածի համառոտ ակնարկ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Ա, Եր., 2006, էջ 142-148:
4. «Պահք ուտողը» և «ուտիներ» անվանումների նույնացման փորձերը Հայ ավետարանական եկեղեցու որոշ պատմագիրների կողմից, Հայ Աստվածաբան /Գիտական հոդվածների ժողովածու Բ/, Եր., 2008, էջ 179-185:
5. Խութեցիների դավանական ինքնության խնդրի շուրջ, Աշտանակ հայագիտական պարբերագիրք, Գ, 2011, էջ 93-103,
6. The song "Key of Truth" and the Problem of "New Tondrakians", «Կանթեղ», 1(46) 2011, էջ 161-166:

Оганджян Анна Мелконовна
РУКОПИСЬ “КЛЮЧ ИСТИНЫ” И ЕГО ИСТОРИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению армянской рукописи 18-го века “Ключ истины” и относящимся к ней научным гипотезам с применением комплексного анализа первоисточников и научных материалов.

На базе данных архивных документов Эчмиадзинского Святого Синода указывается, что сектанты села Третий Архвели (ныне - Лернут), при записе Синодального дела случайно были названы “нео-тондракитами”, у которых была найдена рукопись “Ключ истины”. А. Д. Ерицян, публикуя дело сектантов, ввел имя “нео-тондракиты” в научную литературу, что и дало повод в дальнейшем считать этих людей потомками тондракитов. В действительности же архвельские сектанты, не смотря на некоторые сходства, не тондракиты и своим учением более близки к протестантам-баптистам.

Исследование рукописи показывает, что оригинал “Ключа истины” был написан в 1782 г. в Тароне, а дошедший до нас единственный экземпляр – копия оригинала, сделанная там же в 1811 г. неизвестным писцом. На титульном листе этого экземпляра сегодня читается дата 1882 г. Детальный анализ показывает, что по началу на титульном листе была написана действительная дата копирования – 1811 г. Однако в 1838 г., при конфискации рукописи у архвельских сектантов дата была изменена на 1832 г. Именно эта дата указывается в деле сектантов. Позже дата 1832 была изменена на 1882, что и имеется на данный момент.

Доказывается, что автором рукописи был некий священник Ованес, который по данным первоисточников на протяжении всей жизни несколько раз менял религию и, провозглашая себя епископом, своевольно рукополагал диаконов и священников. Именно про таких людей говорил католикос Симеон Ереванци, называя их бродящими духовниками и неучами, которые скитаются по всей Армении, заходят в дома и обманывают люд.

Колофон “Ключа Истины” начинается словами “Ованеси вахагуно” (Оганеса “вахагун”-а). Большинство исследователей переводят слово “вахагуно” как фамилию “Вахагуни”. В связи с этим автором, а иногда и заказчиком на сегодня имеющегося экземпляра рукописи считается некий Ованес Вахагуни. В диссертационной работе выражается мнение, что слово “вахагуно” – это искаженная форма от “вехагуно” (род. падеж) или “вехагуйн” (имен. падеж), в переводе - величайший или преподобный, который применяется к действительному автору “Ключа” священнику Ованесу.

На основании анализа содержания “Ключа” показывается, что его учение не имеет ничего общего с идеологией павликян или тондракитов, как утверждают ряд ученых (Ф. Конибир, Н. Гарсоян, Л. Арпи, А. Кеоркизян и др.). Учение “Ключа истины” является своеобразным синтезом антилатинских (антикатолических) тенденций, протестантских принципов с элементами адопционистской христологии, армянских церковных обрядов и апокрифических писаний, что отражает религиозную мозаику того времени.

Доказывается, что язык рукописи относится к 18-19 вв., а так же опровергается версия Ф. Конибира, согласно которой автором “Ключа” является “великий тондракийский лидер” Смбат Зареаванци (Смбат из Зареавана), а священник Ованес – лишь переписчиком. Обосновывается так же, что молитвы содержащиеся в “Ключе Истины”, не могут относиться к 4-му веку, как утверждает Ф. Конибир. Их сходство с древними армянскими молитвами обусловлено лишь тем, что автор “Ключа” был священником и зная наизусть церковные молитвы применил тот же стиль к им же сочиненным молитвам в “Ключе”.

В данной работе, на ряду с вышеупомянутыми вопросами, обсуждаются адопционистская гипотеза Ф. Конибира и поддерживающих его мнение ученых, которые на основании учения “Ключа”, полагают, что идеология павликян и тондракитов имела истоки в адопционизме. С учетом данных византийских и армянских первоисточников показывается, что павликяне и тондракиты имели истоки в гностицизме, что отразилось в космологии богомилов и альбигойцев.

Детально анализируются первоисточники на которые ссылается Ф. Конибир как на “новые” источники содержащие сведения об учении павликян. Доказывается, что в них не содержатся данные касающиеся этих сектантов, следовательно они должны рассматриваться как псевдо-источники.

Обосновывается, что Армянская Евангельская Церковь не является “наследницей” павликян и тондракитов, а сформировалась благодаря усилиям американских миссионеров-баптистов. В связи с этим доказывается, что попытки историков Армянской Евангельской Церкви на основании сходства некоторых постулатов “Ключа” с протестантскими идеями связать Армянскую Евангельскую Церковь с павликянством или тондракитами не имеет научной почвы.

Ohanjanyan Anna
THE MANUSCRIPT “KEY OF TRUTH” AND ITS HISTORICAL VALUE

SUMMARY

Current paper is devoted to the study of the Armenian manuscript of 18th century “Key of Truth”, as well as to the scientific hypotheses relating to it, by means of applying complex analysis of primary sources and scientific materials.

On the basis of archival documents of the Echmiadzin Holy Synod it is underlined that the sectarians of village Third Arkhveli (nowadays - Lernut), who had been the owners of the “Key of Truth”, have been accidentally named “neo-Tondrakians” while recording their Synodal case. Later, publishing the case of abovementioned sectarians, A.D. Eritsyan has inserted the name “neo-Tondrakians” into the scientific literature (circles). This fact gave reason to consider these people as descendants of Tondrakians. In fact, Arkhvelian sectarians, despite some similarities, were not Tondrakians and their doctrine was closer to that of Baptist Protestants.

Investigation of manuscript reveals, that the original of the "Key of Truth" has been written in 1782 in Tarone province, and the only extant sample of it is a copy of the original made in the same province in 1811 by an unknown copyist. Today on the title page of this manuscript we read the date 1882. Detailed analysis shows that at first the valid date of copying was written – 1811. However in 1838 during the confiscation of the manuscripts from Arkhvelian sectarians, the date has been changed into 1832. This is the very date mentioned in the Synod case of sectarians. Later, the date 1832 has been changed to 1882, as it is at present.

It is proved, that the author of the manuscript was an average priest named Hovhannes, who, according to the sources, had changed his religion several times. Proclaiming himself a bishop, he willfully ordained deacons and priests. Catholicos Simeon Erevantsi spoke about such people, calling them roaming clerics and the ignorant, who wander across all Armenia, enter houses and deceive folk.

The colophon of the "Key of Truth" begins with the words "*Hovhannesi vahaguno*" (of Hovhannes "*vahagun*"). The majority of researchers translate the word "*vahaguno*" as a surname "Vahag(n)uni". In this regard, a certain Hovhannes Vahaguni is considered to be the author, and sometimes the customer of the existing copy of the manuscript. In this paper it is stated that the word "*vahaguno*" is a distorted form of "*vehaguno*" (*Genitive*) or "*vehaguyn*" (*Nominative*), in translation "the greatest" or "reverend", which is applied to the real author of the "Key" - priest Hovhannes.

On the basis of content analysis of the "Key" it is shown, that its doctrine has nothing in common with the ideology of Paulicians or Tondrakians, as claimed by some scholars (F. Conybeare, N. Garsoian, L. Arpee, A. Keorkizian, etc.). The doctrine of the "Key of Truth" is a kind of synthesis of anti-Latin (anti-Catholic) trends, Protestant principles with the elements of adoptionist Christology, Armenian Church ceremonies and apocryphal writings, that reflects the religious mosaic of the time.

It is proved that the language of the manuscript refers to the 18-19 centuries, as well as refuted F. Conybeare's version according to which the author of the "Key" was "the great Tondrakian leader" Smbat Zarehavantsi (Smbat from Zarehavan), while the priest Hovhannes is just the copyist. It is also proved that prayers reflected in the "Key of Truth", cannot refer to the 4th century as F. Conybeare confirms. Their similarity to ancient Armenian prayers is caused only by the fact, that the author of the "Key" was a priest and knowing by heart church prayers he applied the same style to the prayers invented for the "Key of Truth".

In this paper, along with the aforementioned issues, adoptionist hypothesis of F. Conybeare and supporting his opinion scientists are discussed, who, following the doctrine of the "Key", strongly believe that ideology of paulicians and tondrakians had origins in Christian Adoptionism. Taking into account the data of Byzantine and Armenian sources it is shown that Paulicians and Tondrakians had roots in Gnosticism, which had been reflected in cosmology of Bogomils and Albigenses.

There is an analysis of the primary sources, which F. Conybeare concerned as "new" ones containing data on the Paulician doctrine. It is proved, that they do not contain data relating to this sect, therefore they should be regarded as pseudo-sources.

It is proved, that Armenian Evangelical Church is not a "successor" of Paulicians and Tondrakians, and was formed through the efforts of American Baptist missionaries. In this regard, it is shown, that the attempts of historians of Armenian Evangelical Church to relate it to Paulicians and Tondrakians on the basis of similarity of some postulates of the "Key" with Protestant ideas, don't have any scientific background.